Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.250

The Military Coup of September 12, 1980, in Turkey and Political Developments

Hayk Petrosyan
https://orcid.org/0009-0007-5847-9287
YSU, Master of Caucasian Studies
h.petrosyan.ysu98@gmail.com

Keywords: Turkey, military coup, armed forces, Kenan Evren, NSC, Constituent Assembly.

On September 12, 1980, the military coup that took place showed the unstable situation inside the country. It should also be noted that the elite of the Turkish army, before starting the military coup, had intensive meetings with high-ranking US statesmen for a long time. In the end, after all this was successfully accomplished, the perpetrators of the military coup became the government in the country. Thereby, the "Kurdish movement" was also eliminated, which was also discussed by the military elite. Political parties were not banned, but their public activities were banned; the actual political life was in the hands of the military elite.

1980 թվականի սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը Թուրքիայում և քաղաքական զարգացումները

Հայկ Պետրոսյան
ԵՊՀ, Կովկասագիտության մագիստրոս

Հիմնաբառեր՝ Թուրքիա, ռազմական հեղաշրջում, զինված ուժեր, Քենան Էվրեն, ԱԱԽ, Սահմանադիր մեջլիս։

1980թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը ցույց տվեց երկրի ներսում տիրող անկայուն իրավիճակը։ Ինչպես նաև պետք է փաստել, որ Թուրքիայի բանակի վերնախավը, նախքան ռազմական հեղաշրջման բուն գործողությունները սկսելը, դեռ երկար ժամանակ ինտենսիվ հանդիպումներ է ունեցել ԱՄՆ բարձրաստիճան պետական գործիչների հետ։ Ի վերջո այս ամենը հաջող իրագործելուց հետո, ռազմական հեղաշրջումը իրականացնողները դարձան երկրում իշխանություն։ Սրա շնորհիվ վերացվեց նաև «քրդական շարժումը», ինչը ևս քննարկվում էր ռազմական վերնախավի կողմից։ Քաղաքական

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 250-256
Received: 15.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 17.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

կուսակցությունները չարգելվեցին, բայց արգելվեց նրանց հրապարակային գործունեությունը, փաստացի քաղաքական կյանքը գտնվում էր ռազմական վերանախավի ձեռքում:

Военный переворот 12 сентября 1980 года в Турции и политические события

Айк Петросян
ЕГУ, Магистр кавказоведения

Ключевые слова: Турция, военный переворот, вооруженные силы, Кенан Эврен, СНБ, Учредительное собрание.

12 сентября 1980 г. состоявшийся военный переворот продемонстрировал нестабильную ситуацию внутри страны. Следует также отметить, что элита турецкой армии перед началом военного переворота в течение длительного времени проводила интенсивные встречи с высокопоставленными государственными деятелями США. В конце концов, после того как все это было успешно осуществлено, к власти в стране пришли виновники военного переворота. Благодаря этому было ликвидировано и «курдское движение», о чем также говорила военная элита. Политические партии не были запрещены, но была запрещена их публичная деятельность, собственно политическая жизнь находилась в руках военной элиты.

* * *

20-րդ դարի երկրորդ կեսը Թուրքիայում հարուստ է ներքաղաքական բուռն զարգացումներով, ինչի արտացոլումներից է այն, որ տեղի ունեցավ երկու զինվորական հեղաշրջում [1960 թ. և 1980թ.] և երկու անգամ էլ զինվորականությունը միջամտեց քաղաքական կյանքին [1971 թ. և 1997թ.]: Հատկապես 1980թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած հեղաշրջումն ընդունված է որակել որպես «Հանրապետության պատմության ամենաարյունոտ ժամանակաշրջան:

1970-ական թվականների վերջին Թորքիայում գնալով աճում էին քաղաքական սպանությունները, հանցագործությունները, սրվում էին տարբեր քաղաքական և կրոնական ուժերի հակասությունները, որի հետևանքով 1980 թ. սկզբին արդեն քաոսային իրավիճակ էր ստեղծվել Թուրքիայում: Դեռևս 1979 թ. դեկտեմբերի 27-ին Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենը երկրի նախագահ Ֆահրի Քորություրքին հանձնեց երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ բանակի մտահոգությունն արտահայտող նախազգուշացնող նամակը: Նրանում ասվում էր, որ, ելնելով երկրում առկա լուրջ խնդիրներից, հարկադրված են հրավիրել սահմանադրական մարմիններ և քաղաքական կուսակցությունները պարտավոր են կատարելու իրենց պարտականությունները [Данилов, 1991, 48]:

1980թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում իրականացվեց ռազմական հեղաշրջում: Նույն օրը հրապարակվեց № 1 հաղորդագրությունը, ստորագրված ԳՇ պետի և Ազգային անվտանգության խորհրդի նախագահի՝ Ք. Էվրենի կողմից, նշվում էր, որ «պետական և սահմանադրական համակարգերը, ինչպես նաև քաղաքական կուսակցությունները, չեն իրականացրել անհրաժեշտ

միջոցառումներ՝ հանուն պետության փրկության: Հետադիմական և այլ վտանգավոր գաղափարները ներթափանցել են կրթության, կառավարման և դատական համակարգեր, անվտանգության մարմիններ, քաղաքական կուսակցություններ և երկիրը հասցրել են քաղաքացիական պատերազմի շեմին: Ստեղծված իրավիճակում, զինված ուժերը երկրի ամբողջ իշխանությունը վերցնում է իր ձեռքը, և հայտնում, որ խորհրդարանը և կառավարությունը լուծարվել է, երկրում հաստատվել է ռազմական դրություն» [Данилов, 1991, 244-245]:

ԱԱԽ-ը փաստացի իր ձեռքում էր կենտրոնացրել անսահմանափակ իշխանություն [Ягудин, 2008, 207]: Քենան Էվրենը նախապես ուներ վարչապետի թեկնածու, Թուրհան Ֆեյզիոոլլին, ով ընկալվում էր Աթաթուրքի սկզբունքների շարունակողը: Թ. Ֆեյզիոոլլին չհրաժարվեց այս պաշտոնից, բայց ասաց Ք. Էվրենին, որ ներկայացնում ոչ մեծ կուսակցություն և ազգային ժողովում ունեն ընդհամենը չորս տեղ և պետք է վերանայվեն հարաբերությունները քաղաքական ուժերի հետ, կառավարությունում պետք է ընդգրկվեն «չափավոր» ուժեր, ինչպես ՀԺԿ-ից այնպես էլ ԱԿ-ից [Данилов, 2008, 58]:

Հեղաշրջման կազմակերպիչ գեներալ Ք.Էվրենը իրեն հռչակեց երկրի նախագահ և վարչապետ նշանակեց ծովակալ Բ.Ուլուսուին: Նոր կառավարությունում ընդգրկվել է 7 զինվորական: Ք.Էվրենի քաղաքական հայացքների մասին հայտնի է, որ նրան խորթ է եղել ցանկացած արմատականություն: ԱԱԽ անդամների մոտ հստակ «քաղաքական դեմքի» բացակայությունը հակասությունների տեղիք է տվել նրանց քաղաքական պլատֆորմի շուրջ [Ganser, 2005, 235]:

Ֆեյզիոոլլուն կառավարություն կազմելու հարցում բարդ խնդիրներ էին սպասվում: ՀԺԿ և ԱԿ ղեկավարները, սկսեցին լուրջ պահանջներ ներկայացնել կառավարության մաս կազմելու համաձայնության դիմաց՝ փորձելով այդ կերպ որոշակի ազդեցություն ունենալ քաղաքական գործընթացների վրա: Դեպքերի նման ընթացքը զինվորականների ծրագրերի մեջ չէր մտնում, և նոր թեկնածություն ներկայացրեցին: Ֆեյզիոոլլուի «վարչապետության» շրջանը տևեց 5 ժամ, և այս ձախողումից հետո ԱԱԽ-ն սեպտեմբերի 21-ին վարչապետ նշանակեց ռազմաօդային զորքերի նախկին հրամանատար, զորացրված ծովակալ Բյուլենթ Ուլուսուին[Karabelias, 1999, 134]:

Իշխանությունների պատժամիջոցների գլխավոր թիրախ դարձավ նաև քրդական շարժումը: Զինվորականները «հարմար առիթը» օգտագործեցին՝ քրդական շարժումն իսպառ վերացնելու համար, որը 1970-ական թթ. վերջերին և 1980 թ. սկզբներին գտնվում էր դեռևս ձևավորման փուլում: 1981 թ. հոկտեմբերին Քենան Էվրենն իր հարցազրույցներից մեկում նշում էր, որ ամեն անգամ, երբ թուրքական պետությունը թուլանում է, քրդական շարժումները գլուխ են բարձրացնում և փորձում են քանդել երկրի միասնականությունը, և իշխանություններն ամեն ինչ կանեն քրդական հարցն «արմատախիլ» անելու համար [Гасратян, 1990, 306]:

Երկրի խոշորագույն կուսակցությունների՝ ԱԿ-ի և ՀԺԿ-ի նկատմամբ զինվորական իշխանությունների քաղաքականությունը բավականին զգուշավոր էր: Ս. Դեմիրելը, ինչպես նաև՝ կուսակցության ակտիվիստները խուսափեցին զինվորականների պատժամիջոցներից, այս ամենի հետ մեկտեղ, Դեմիրելը հրաժարվեց ծավալել ակտիվ հրապարակային գործունեություն: Իսկ Բյուլենթ Էջևիթը, 1981 և 1982թթ. ընթացքում զինվորական ռեժիմը քննադատելու համար մի քանի

անգամ դատական պատասխանատվության ենթարկվեց [Middle East Contemporary Survey, 1984, 885-886]:

1981թ. հունիսի 29-ին ԱԱԽ-ն օրենք ընդունեց Սահմանադիր մեջլիսի մասին: Օրենքի նախաբանում նշվում էր, որ ԱԱԽ-ն ընդունել է որոշում ստեղծել Սահմանադիր մեջլիս, սահմանադրություն նախապատրաստելու համար:

Ռազմական հեղաշրջումից հետո, չնայած այն փաստին, որ քաղաքական կուսակցությունները չլուծարվեցին, բայց, ըստ էության, նրանց հրապարակային գործունեությունն ամբողջովին արգելված էր [Hale, 1997, 247]:

Վերջին 120 տարիների ընթացքում առաջին անգամ Թուրքիայում արգելվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները: Այդ քայլը ուղղված էր նախքան հեղաշրջումը գործող քաղաքական կուսակցությունների և դրանց ղեկավարների դեմ՝ նրանց զրկելով քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորությունից: Զինվորականների նպատակն էր իրենց հսկողությամբ ձևավորել երկրի նոր քաղաքական համակարգը: Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը մշակվում էր Խորհրդատվական մեջլիսի կողմից, ԱԱԽ անմիջական հսկողությամբ և ընդունվեց 1983թ. ապրիլի 22-ին [Данилов, 2008, 74]:

1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման մեջ պետք է փաստել նաև արտաքին ուժի դերը: 1952 թվականին Թուրքիան երբ անդամակցեց ՆԱՏՕ-ին՝ դրանով նա հաստատեց իր արևմտամետ լինելու փաստը, նա հիմնականում սերտ հարաբերությունների մեջ էր ԱՄՆ-ի հետ: Սակայն այդ հարաբերությունները սրվեցին 1970-ական թթ. և ԱՄՆ-ի դիրքերը Թուրքիայում թուլացան, ինչը որոշ քաղաքական շրջանակներ կապում էին, տարածաշրջանում Ամերիկայի կողմից Իրանին առաջնայնություն տալուն: Սա երկար չտևեց, Իրանում՝ իսլամական հեղափոխությունը և խորհրդային զորքերի գործողություններն Աֆղանստանում խախտեցին տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը, բայց ոչ Ամերիկայի օգտին: ԱՄՆ-ին պետք էր տարածաշրջանում վերականգնել դիրքերը, և դա նա տեսնում էր Թուրքիայի հետ հարաբերությունների վերականգնման ճանապարհով:

1979թ. հունվարին ԱՄՆ-ում ստեղծվեց պետական հատուկ հանձնախումբ՝ ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող երկրների, ներքաղաքական իրավիճակներն ուսումնասիրելու նպատակով: Հանձնախմբում ընդգրկված էին բարձրաստիճան պաշտոնյաներ և գիտնականներ, որոնք պետք է հասկանային, հնարավո՞ր է արդյոք այդ երկրներում իրանական սցենարի կրկնությունը, և նման դեպքերում ինչպիսի՞ն պետք է լինի ԱՄՆ հակազդեցությունը: Հատկապես անհանգստացնող էին Թուրքիայի վերաբերյալ ուսումնասիրությունները [Кремнюк, 1984, 157-158]:

1979թ. հունվարին Գվադելուպայում կայացավ ԱՄՆ նախագահ Ջիմի Քարթերի, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջեյմս Քալահենի, Գերմանիայի կանցլեր Հելմութ Շմիդտի և Ֆրանսիայի նախագահ Ժիսկար դ'Էստենի հանդիպումը, որի ժամանակ որոշվեց օգնություն ցույց տալ Թուրքիային [Поцхверия, 1984, 86]: Սկսեցին տրամադրել ֆինանսավարկային միջոցներ Թուրքիային՝ երկիրը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու նպատակով: Դրանց շարքում էր նաև «հունվարի 24-ի» տնտեսական բարեփոխումների ծրագիրը, որը ստեղծվեց արևմտյան ֆինանսական կազմակերպությունների որոշիչ մասնակցությամբ և միտված էր երկրի տնտեսության վիճակը կարգավորելուն [Çölaşan, 1983, 57-73]:

The Military Coup of September 12, 1980, in Turkey and Political Developments
1980 թվականի սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը Թուրքիայում և քաղաքական զարգացումները

Բայց այս ամենը չէին վերահսկում իրավիճակը, և ԱՄՆ իշխանական շրջանակներում սկսվեց քննարկվել ռազմական հեղաշրջման անհրաժեշտությունը: Վաշինգտոնում գտնում էին, որ պետք ֆինանսական աջակցություն ցուցաբերել Էջևիթի կառավարությանը՝ փորձելով ժողովրդավարական քայլերով Թուրքիան դուրս բերել ճգնաժամից: Սակայն Էջևիթի կառավարության անարդյունավետ քաղաքականությունը, ուժային կառույցների ճնշումները նպաստեցին ԱՄՆ-ի քայլերի արագացմանը, ռազմական հեղաշրջում իրականացնելու հարցում: [Դումանյան, 2016, 102-103]:

Այս հարցի հետ կապված իրատեսական քննարկումներ են տեղի ունենում 1979թ. հունիսին ԳՇ պետ Քենան Էվրենի՝ ԱՄՆ կատարած այցի շրջանակներում ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Զբիգնև Բժեզինսկու հետ հանդիպման ժամանակ: Այդ ընթացքում քննարկվեցին Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը և բանակի դերը հետագա զարգացումներում: Բժեզինսկին նշում էր, որ ԱՄՆ ղեկավարությունը «ուզում է տեսնել կայուն Թուրքիա, բայց զարգացումները այդ ճանապարհով չեն ընթանում. հարկավոր է ինչ-որ քայլեր ձեռնարկել» [Alatlı, 1980, 398]:

Ք. Էվրենը, վերադառնալով ԱՄՆ-ից, կազմակերպեց հանդիպում երկրի զինված ուժերի հրամանատարների հետ, առաջին անգամ եղավ քննարկում զինվորականների՝ քաղաքական կյանքին միջամտելու անհրաժեշտության հարցով [Դումանյան, 2016, 104]:

Հետագա հանդիպումներում ևս Ամերիկյան կողմը բացահայտ կոչեր է անում թուրքական բարձրաստիճան զինվորականներին, և նշվում էր, որ Թուրքիայում բանակը պետք է միջամտի և երկրում կարգուկանոն հաստատի: 1980թ. մայիսին Թուրքիայի ԳՇ 2-րդ պետ, Հ. Սալթըքի և ՆԱՏՕ-ի զորքերի գլխավոր հրամանատար Ռոջերսի միջև Բրյուսելում կայացած հանդիպման ժամանակ վերջինս հարցնում էր, թե Թուրքիայում տիրող անկարգությունների դեմ թուրքական բանակն ինչ է մտադիր ձեռնարկել [Oran, 1990, 33]:

Եվ պետք է փաստել, որ ռազմական հեղաշրջումների առանձնահատկություններից էր, 1961-ի հոկտեմբերից մինչև 1989-ը[1989 թ-ին նախագահ դարձավ Թուրգութ Օզալը] Թուրքիան ունեցավ չորս նախագահ, որոնք զինվորականներ էին՝ Ջեմալ Գյուրսելը [1961թ. հոկտեմբեր-1966թ. մարտ], Ջևդեթ Սունայը [1966թ. մարտ-1973թ. մարտ], Ֆահրի Քորություրքը [1973թ. ապրիլ-1980թ. ապրիլ] և Քենան Էվրենը [1982թ. նոյեմբեր-1989թ. նոյեմբեր] [Պետունց, 2017, 142]:

1960 թվականի Սահմանադրությունն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 1982 թվականի նոյեմբերի 7-ին ընդունվել է նորը, ըստ որի Ազգային անվտանգության խորհրդին տրամադրվել են պետության կառավարման բացառիկ իրավունքներ մինչև Թուրքիայի Ազգային մեծ ժողովի գումարումը: Սահմանադրության համաձայն՝ քաղաքական կուսակցությունների գործունեությունը սահմանափակ էր: Ուսանողների, պետական ծառայողների և զինվորականների համար կուսակցություններին անդամակցությունն արգելված էր [Сотниченко, 2009, 44]:

1980 թվականի սեպտեմբերի 12-ի հեղաշրջումը նեոլիբերալիզմի հեղաշրջում էր, որի դեպքում զինվորական տարրն օգտագործվեց հունվարի 24-ի նեոլիբերալ որոշումների իրականացման համար անհրաժեշտ քաղաքական կայունությունն ապահովելու համար: Ռազմական հեղաշրջման պայմաններում հունվարի 24-ի կայունության ծրագրի քաղաքական

հենասյունը ձեռք բերեց մեխանիզմ, որը կարող էր հեշտությամբ տեղաշարժվել: Հետևաբար, ողջամիտ կլիներ ընդգծել նեոլիբերալիզմի ազատություններին բնորոշ լարվածությունը, որոնք աչք են փակում ավտորիտար ռեժիմների վրա և հաճախ գաղտնի աշխատում են դրանց հետ միասին: Իրականում, որոշումները իրականացվել են ռազմական ռեժիմի ավտորիտար բնույթի շրջանակներում, և տնտեսական քաղաքականության մեջ ստեղծվել է հեղափոխական շարժում: Ահա թե ինչու կապիտալիստական դասը, մասնավորապես TÜSİAD[1]-ը, աջակցեց հեղաշրջման ռեժիմին՝ կապիտալի կուտակման իրենց շահերը պաշտպանելու համար: Կարելի է ասել, որ կապիտալիստական դասը, որը աջակցում և պահանջում է Սահմանադրության աշխատանքային իրավունքների, արհմիութենական իրավունքների և սոցիալական իրավունքների դրույթների չեղարկումը, մտահոգված չէ ժողովրդավարությամբ, այլ միայն կապիտալի կուտակմամբ, և այդ պատճառով կարելի է ասել, որ ռեժիմի ավտորիտար կամ ռազմականացված լինելու մեջ խնդիր չկա: Այս պատճառով սեպտեմբերի 12-ը մեկնաբանվում է որպես քաղաքական քայլ, որը հաշվի է առնում բուրժուազիայի տնտեսական մտահոգություններն ու շահերը [Ökten, 2022, 8-28]:

Այնուամենայնիվ, 1980 թվականի հեղաշրջումը առանձնանում է Թուրքիայի պատմության մեջ, և այն իրոք ոչ պակաս լայնածավալ էր, քան Լատինական Ամերիկայում տեղի ունեցած ժամանակակից հեղաշրջումները, որոնց միջազգային հանրությունը շատ ավելի մեծ ուշադրություն էր դարձնում: 500,000 մարդ բանտարկվեց, իսկ մոտ 150,000-ը՝ ենթարկվեց խոշտանգումների, 55 մահապատժի դատավճիռ կայացվեց: Չնայած Թուրքիան որոշակի միջազգային քննադատության ենթարկվեց, բայց թուրքական զինվորականները խուսափեցին բարոյական դատապարտումից, քանի որ հեղաշրջմանը նախորդող իրադարձությունները նրան որոշակի լեգիտիմություն էին հաղորդել [Karaveli, 2008]:

Թեև ԱՄՆ-ն ուղղակիորեն չէր կազմակերպել հեղաշրջումը, բայց աջակցում էր կազմակերպիչներին: Ռազմական հեղաշրջման նախապատրաստման հարցերով զբաղվում էր Թուրքիայում Կենտրոնական հետախուզության վարչության ներկայացուցիչ Փոլ Հենցը [Բուհական դասգիրք, Եր., 2018, 241]: Հեղաշրջումից տարիներ հետո հրապարակված նյութերը հաստատում էր այն տեղեկությունները, որ համագործակցություն է եղել Փ. Հենցի և հեղաշրջումն իրականացրած գեներալների միջև:

1980թ. ռազմական հեղաշրջումը դրական արձագանք ստացավ արևմտյան երկրներում, հատկապես ԱՄՆ պաշտոնական շրջանակներում հեղաշրջումը բացահայտ գոհունակությամբ ընդունեցին: Սա հիանալի առիթ հանդիսացավ ԱՄՆ-ի համար վերականգնել իր դիրքերը տարածաշրջանում և թուրքական զինվորականության ձգտումները համընկնում էին ամերիկյան արտաքին քաղաքականության ունեցած ծրագրերին:

Գրականության ցանկ

Dumanyan A., 1980 T’vakani Rrazmakan Heghashrjumy T’urk’iayum. Patcharrnery, Ynt’ats’k’y, Hetevank’nery, Yerevan, 2016, ej 102-103:

[1] Turkish Industry and Business Association (Turkish: Türk Sanayicileri ve İş İnsanları Derneği) is Turkey's top business organization.

T'urk'iayi Hanrapetut'yan patmut'yun, Buhakan dasgirk', Yer., 2018, ej 241:

Petunts' A., T'urk'iayi K'aghak'ats'iakan ishkhanut'yun-banak p'vokhharaberut'yunnery 20-rd dari yerkrord kes 21-rd dari skizb. 2016 t'vakani rrazmakan heghashrjman p'vordzy, Arevelagitut'yan Harts'er, № 13, 2017, ej 142.

Gasratyan M., Kurdy Turtsii v noveysheye vremya, Yerevan, 1990, str. 306.

Danilov V., Turtsiya 80-kh : ot voyennogo rezhima do "ogranichennoy demokratii", Moskva, 1991, ctr. 48.

Danilov V, Politicheskaya bor'ba v Turtsii: 50-ye - nachalo 80-kh godov KHKH v. (politicheskiye partii i armiya). Moskva, 1985, str. 244-245.

Yagudin B., Gosudarstvennyy perevorot 12 sentyabrya 1980 goda v Turtsii // Uchonyye zapiski Kazanskogo gosudarstvennogo universiteta: gumanitarnyye nauki, 2008, t. 150, kn. 1, str. 207.

Danilov V., Turtsiya 80-kh : ot voyennogo rezhima do "ogranichennoy demokratii", str. 58.

Ganser D. NATO's Secret armies. Operation gladio and terrorism in Western Europe. London: Frank Cass, 2005, p.235.

Karabelias G., The Evolution of Civil-Military Relation of Post-war Turkey: 1980-95, Middle Eastern Studies, Oct. 1999, p. 134.

Middle East Contemporary Survey, Vol. 6, 1981-82. New York, 1984, p. 885-886.

Hale W., Turkish Politics and the Military, London, 1994, p. 247.

Danilov V., Turtsiya 80-kh : ot voyennogo rezhima do "ogranichennoy demokratii", str. 74.

Kremnyuk V., Bor'ba Vashingtona protiv revol yutsii v Irane, Moskva, 1984, str. 157-158.

Potskhveriya B., Turtsiya, SSHA i NATO v kontse 70-kh – nachale 80-kh godov, Turtsiya. Istoriya, ekonomika, politika, Moskva, 1984, str. 86.

Çölaşan E., 24 Ocak Bir Dömenin Perde Arkası, İstanbul, 1983, s. 57-73.

Alatlı E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, s. 398.

Oran B., Kenan Evren'in Yazılmamış Anıları, Ankara, 1990, s. 33

Sotnichenko A., Osobennosti modernizatsii v Turtsii, Sankt-Peterburg: Izdatel'stvo Yevropeyskogo universiteta v Sankt-Peterburge, 2009. — 44 s. — (Seriya preprintov; M-11/09; Tsentr issledovaniy modernizatsii). https://eusp.org/sites/default/files/archive/centres/M-center/M_11-09.pdf mutk', 09.12.2023